ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀՈՒՅՍԻ ԿԱՄՈՒՐՋ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ <<ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՄԻՋԵՎ

ք. Իջևան <<5>> 03 2021թ.

«Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության Իջևանի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնը (այսուհետ՝ «Հույսի կամուրջ»), ի դեմս տնօրեն Ա. Ներսիսյանի և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ), ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի, այսուհետ՝ Կողմեր, կնքեցին սույն հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1.

I. Փոխըմբռնման հուշագրի առարկա

1. Սույն փոխըմբռնման հուշագիրը կոչված է՝

1) համակարգելու «Հույսի կամուրջ» ՀԿ և ԵՊՀ ԻՄ-ի միջև արդյունավետ համագործակցությունը.

2) աջակցելու Տավուշի մարզում համընդհանուր ներառական կրթության կայացմանը, մանկավարժական կրթության բարեփոխման գործընթացներին, հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությանը և բազմակողմանի զարգացմանը, նրանց՝ որպես հասարակության լիարժեք քաղաքացիների գաղափարի ամրապնդմանը:

II. Հուշագրի նպատակը

Բարձրացնել քաղաքացիական հասարակության, այդ թվում ուսանողների իրազեկվածությունը ներառական սկզբունքների՝ հավասար հնարավորություններ, միջավայրային մատչելիություն, կրթության հասանելիություն:

1. *Բարձրացնել ԵՊՀ ԻՄ մանկավարժի որակավորում ստացող ուսանողների տեսական և գործնական գիտելիքները ներառական կրթության սկզբունքների ու դրանց կիրառման վերաբերյալ:*
2. *Խթանել ԵՊՀ ԻՄ-ի դասախոսների և ուսանողների համագործակցությունը հաշմանդամության հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների, Ներառական դպրոցների հետ և համատեղ ջանքերով համալսարանում փոխել վերաբերմունքը հաշմանդամություն և/կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց, կրթության կազմակերպման նոր մոտեցումների նկատմամբ, որոնք հիմնված են մարդու իրավունքների և հավասար հնարավորությունների սկզբունքների վրա:*

III. Կողմերի պարտականությունը

1. «Հույսի կամուրջ»-ի պատրաստական է՝

1) մշակել և անցկացնել լրացուցիչ 5 օրյա դասընթաց մանկավարժի որակավորում ստացող ուսանողների համար «Ներառական կրթության տեսություն և պրակտիկա» թեմայով,
2) համալրել ԵՊՀ ԻՄ-ի գրադարանը ներառական կրթության և մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրման վերաբերյալ գրքերով և ձեռնարկներով,
3) «Հույսի կամուրջ» ՀԿ Իջևանի կենտրոնում ստեղծել հարթակ, որը կարող է գործել նաև առցանց, ապահովելու՝ Ներառական կրթության և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող

երեխաներին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցման վերաբերյալ գործնական պարապմունքների, կլոր-սեղան քննարկումների, փորձի փոխանակման միջոցառումներ,

4) Համագործակցելով ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական խորհրդի հետ՝ խթանել «Հույսի կամուրջ» ՀԿ-ի Ներառական դպրոցների և համալսարանի միջև սերտ համագործակցություն՝ համատեղ քարոզարշավների, սեմինարների և հանրային միջոցառումների միջոցով:

2.ԵՊՀ ԻՄ-ն պարտավորվում է.

2.1 Ապահովել արդյունավետ համագործակցությունը ԵՊՀ ԻՄ-ի և «Հույսի կամուրջ» ՀԿ-ի միջև,

2.2 Մանկավարժի որակավորում ստացող ուսանողների համար նրանց համաձայնությամբ թույլատրել իրականացնել «Ներառական կրթության տեսություն և պրակտիկա» լրացուցիչ դասընթացը՝ առնվազն 5 մոդուլի ծավալով,

2.3 Որոշել ԵՊՀ ԻՄ-ում պատասխանատու անձ, ով սերտ կհամագործակցի «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության աշխատակիցների հետ հուշագրի շրջանակներում:

IV. Փոփոխություններն ու լրացումները

Սույն հուշագրում կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրությամբ: Արձանագրությունը կհանդիսանա Հուշագրի անբաժանելի մասը:

V. Հուշագրի գործողության ժամկետն ու դադարեցման հիմքերը

2.4 Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և գործում է անորոշ ժամկետով:

2.5 Սույն հուշագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ մյուս կողմին գրավոր ծանուցմամբ:

VI. Հուշագիրը սպորագրող կողմեր.

«Հույսի կամուրջ» ՀԿ ԻՄ
Տնօրեն՝ Արմինե Ներսիսյան

(ստորագրություն) Կ.Տ

Հասցե՝ ք.Իջևան, Բլրույան 4/2

ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար
Անուշավան Մակարյան

(ստորագրություն) Կ.Տ

Հասցե՝ ք. Իջևան, Ուսանողական 3